

աղաւթս ձեր: Աստանաւր յերեսս անկեալ կրկնապատիկ մաղթեմ զխումբս ընտրելոցդ սրբոց, որք միանգամ պատահէք հոգեւորական բերկրանաց տեսութիւնէ կամ մտաւորական վերծանութիւն. սրբոյ մատենիս. սխալանաց գրչիս ներեցէք իբրեւ տկար բնութիւն. վս. զի որպէս յառաջն ասացի ոչ ներհուն գոլով մեր յարհեստ գրչութեւ, որպէս պահանջէ մեծագոյն աշխատութիւն. վարկ. սակայն եւ ոչ ըստ կամաց եղեւ մեզ զիպիւ տեղոյ, քանզի յարկն յորում կայաք, բացակայ գոլով, մծնոյր. հանապաղ մեկանն ի յաւգոյն. ընդ որ յոյժ վշտանայի, եւս եւ աղմուկ զբուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի. վս. որոյ եւ ոչ կարողանայաք ճահողակի հանգիպիլ ի գործ արհեստի. վս. որոյ թախանձեմ աղերսիւ, զի բարի մտաւք յիշեալիք յաղաւթս ձեր զոքնամեզ գրիչս եւ զծնողսն իմ եւ զեղբարսն, զի թերեւս արժանի լիցուք աղաւթիւք եւ ա. սրբոց մասն ողորմութեւ. գտանել յաւրն վերջին. եւ զսխալն սիրով ուղղեալիք, զի եւ զձեր սխալանսն ջնջեցէ ամենագութ տրն: Յիշեալիք աղաչեմ եւ զՅովկս. եւ զՎարթանէս սրբասէր քահանայք, որք են հարազատք իմ եւ սպասաւորք: եւս եւ զպտանիս. զՍարգիս զպիր, որ յոլով սպասաւորեաց մեզ, յիշեալիք աղաւթիւք, զի յիշեցեալքս եւ յիշողդ առ հասարակ արժանի լիցուք ողորմութեն. Քի. աւրհներոյն յաւիտեանս ամեն:

244բ. Վարդան Կիլիկեցու ձեռքով.

Ձստացաւ զածային. դանձիս զԵսայի վարժապետ, յիշեալիք յաղաւթս եւ Ած. զձեզ.

408ա. Վարդան Կիլիկեցու ձեռքով.

Ձամպս գերագոյն հրաշիւք լուսատու ցաւ զվարժապետս իմ Եսայի, ստացաւ զածային. իմաստիս, ո՛վ ընթերցաւդ յիշեցէք ի յաղաւթս ձեր եւ զՎարդան նուստ գրիչ եւ Ած. զձեզ յիշէ ամէն:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 76.

Բ. Գիրք. 214. պատկ. 205.

Ձեռ. Էջմ. 652/749.

109բ.

Վիմարդեան գլուխ բանի  
իննեակ թուով յաւէտ խօսի:  
Տրն. է քարոզ բարձր վիմի,  
աշակերտացն Տն. Յի.:

Ահա ասել զՏն. ձայնի՝  
յոյժ աղքատացն երանելի.  
հոգով լինել իբր զոսկի,  
մաքուր մարմնով մինչ ապակի:

Բախ լինել հեզ եւ բարի  
ժողանդ վերինն կայանի,  
հաւատ եւ յոյս է կենդանի  
միշտ ելանել յերկիր բարի:

Դիտումն է լոյս զգայականի,  
սգաւորք լինել ի յաշխարհի,  
յորժամ հոգի Տն. հնչի  
մխիթարիչ հոգոց լինի:

Ահա քաղցեալքն երանելի,  
որ ի սեղան Հօրն բազմի,  
ատել զսէր այս աշխարհի,  
եւ ճաշակել զբան կենդանի:

Նախկնարար մեզ քարոզի  
յԱծային. բանն եւ հոգի,  
թէ ողորմածն երանելի,  
Տր. մարդասէր առ նա ձայնի:\*

ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 77.

Ձեռ. Էջմ. No. 3606.

Բ. Գիրքի 215. պատկ. 206բ.

273ա. Յորժամ գրեցաւ եւ յանկ ելեալ աւարտեցաւ  
բացայայտութիւն. զպրութեւն. ածախաւս. րժան. մզէիցս.  
դիտապետք Հայոց տր. Գրիգոր, տր. Ջաքարէ եւ տր.  
Ստեփանոս Աղուանից եւ վարժապետ Եսայեայ/

273բ. եւ ստացաւ սորին պատուական եւ ածախաւս. բարունին Յոհանէս. եւ թագաւոր Հեթում, այր բարեպաշտ եւ իմաստասէր եւ մանաւանդ ածասէր. եւ կայսր աշխարհակալ Սաղահ Ղան յազգէն նետողաց, տիրելով Հայոց եւ Ասորոց, Վրաց եւ Աղուանից, Մաւրաց եւ Պարսից, Թուրքաց եւ Հաղարացոց:

Բայց գրեցաւ հրամանաւ վերասացեալ առնն Այ. Եսայ. բարունապետի ի խնդրոյ Յոհանէս վարդապետի եւ ձեռամբ Թագէտոյ անարհեստ գրչի. ի թուիս Հայոց ՉԾԲ. ի գաւառիս Այրարատեան ի վանքս որ կոչի Նոնանից ընդ հովանեաւ սր. Ածածնիս. եւ այլ կենսակիր սր. նշանացս. այլ եւ գրեցաւ ի դառն եւ ի դժնդակ ժամանակի ձեռնան յեղանակի բազում տառապանաւք եւ նեղութիւն. երբեմն ի ցրտոս եւ ի ձմեռնային խրատութենէս. տառապէի, երբեմն ի Թաթարի գալու գնալոյ ու ի տեղեաց աւերութենէն. մեք փախըստական լինէաք ու մխիթարութիւն. ոչ ուստեք ու ես հայնց կամէի որ ամէն գիր ոսկի էր լել. ապա մեր կարողութիւն. այդչափ էր. Այ. սիրոյն համար անմեղաբեր լերուք. որոց հանգիպելոցդ ամին հայցեմք ի ձէնջ յիշատակիլ բարի յիշատակաւն Քիւ. ստացող սորին Յոհանէս վարդապետ. եւ աշխատողքս ի փառս աւրհներոյն յաւիտեանս ամմէն:/

274ա. Տարբեր գրով.

Եւս եւ զաղախինն Տն. զԱսուղայն յիշեալիք ի Քս.: Քանզի ի նորա սակս յիշատակի տուեալ եղեւ զծագրել զսայ ի վարժս աւկոտի մանկանց նորոյս Սիոնի